Քննարկվել է մանկավարժական խորհրդի
30.12.2019թ. թիվ 04 նիստում
Նախագահ՝ Ք. Ահարոնյան

Հաստատվել է Խորհրդի 18.01.2020թ.
թիվ 01 նիստում
Նախագահ՝ Ա. Եսայան

ԿԱՐԳ

ՀՀ ԳՅՈՒՄՐՈՒ ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՋՈՐԴ ԿՈՒՐՍ ՓՈԽԱԴՐՄԱՆ

Սույն կարգով սահմանվում են Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի ուսանողների կողմից կրթական ծրագրի յուրացման, ստուգարքների անցկացման, փոխադրման և ուսումնական տարվա ընթացքում բացակայած ուսանողի՝ հաջորդ կուրս փոխադրման հետ կապված հարաբերությունները:

Կրթական ծրագրի յուրացումը և հաջորդ կուրս փոխադրումը

1. Ուսանողները փոխադրվում են հաջորդ կուրս ընթացիկ և տարեկան ամփոփիչ գնահատականների, արդյունքների և մոդուլների ամփոփման, ստուգարքների հանձման, արտադրական ուսուցման և արտադրական պրակտիկայի գնահատման և անհրաժեշտ նվազագույնի յուրացման պայմանով:
2. Տարեկան ամփոփիչ գրավոր աշխատանքները և ստուգարքները, ինչպես նաև արտադրական ուսուցումն ու պրակտիկան գնահատվում են 1-10 միավորային համակարգով, որից անցումային դրական միավոր համարվում է 4-ը:

- Ուսումնարանում հանրակրթական առարկաները գնահատվում են ընթացիկ բանավոր հարցումների, գործնական, թեմատիկ, կիսամյակային գրավոր աշխատանքների հիման վրա: Տարեկան գնահատականներ նշանակում են դասավանդողները՝ ուսումնական պարապմունքների վերջին շաբաթվա ընթացքում՝ հաշվի առնելով սովորողի կիսամյակային գնահատականները:
- Մասնագիտական գիտելիքները, կարողություններն ու հմտությունները գնահատվում են մոդուլների ըստ կատարման չափանիշների արդյունքների ամփոփումների, տնօրինության կողմից կիսամյակային ամփոփիչ ստուգարքների միջոցով:

3. Առաջադրանքները կազմվում են առարկաները մուդուլները դասավանդող դասախոսի և վարպետի կողմից, քննարկվում՝ համապատասխան մեթոդական միավորման նիստում, հաստատվում՝ տնօրենի կողմից և անցկացվում՝ սահմանած ժամանակացույցի համաձայն:
4. Ամփոփիչ գրավոր աշխատանքների և ստուգարքների ժամանակացույցը կազմվում է ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալի կողմից, որը հաստատում է տնօրենը:

5. Անցումային շեմը չհաղթահարած ուսանողներին, մեթոդմիավորման առաջարկով և մանկավարժական խորհրդի որոշմամբ թույլատրվում է վերահանձնել մոդուլային ստուգարքները և ամփոփիչ աշխատանքները: Վերոնշյալ պայմաններով փոխադրվող կամ վերահանձնող ուսանողի համար ուսուցում կազմակերպելու նպատակով տնօրենի հրամանով ստեղծվում է առարկայական մասնագիտական խումբ:
6. Հիմք ընդունելով առարկայական մասնագիտական խմբի կարծիքը և առաջարկությունները՝ ուսանողի փաստացի առարկայական գիտելիքների մասին, ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալը կազմում է ուսումնական պլանով նախատեսված առարկաներից և մոդուլներից անհատական ուսուցման ծրագրերի և լրացուցիչ պարապմունքների ժամանակացույց և ներկայացնում տնօրենի հաստատմանը:
7. Վերահանձնումը դրական չգնահատվելու դեպքում ուսանողին ամառային առաջադրանք տալու կամ կուրսը կրկնելու վերաբերյալ Հաստատության մանկավարժական խորհրդի որոշման մասին, տնօրենի հանձնարարությամբ, ուսանողին կամ անչափահաս լինելու դեպքում ուսանողի ծնողին (օրինական ներկայացուցչին) տեղյակ է պահում վարպետը կամ դասղեկը՝ մանկավարժական խորհրդի նիստից հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ գրավոր ծանուցմամբ:
8. «□Ֆիզկուլտուրա», «Նախնական զինվորական պատրաստություն» առարկաների պարապմունքներից առողջական վիճակի պատճառով սովորողի ազատված լինելը, ինչպես նաև չդասավանդելու պատճառով որևէ առարկայից տարեկան գնահատական չունենալը չի ազդում նրա՝ հաջորդ կուրս փոխադրվելու վրա:

Ուսումնական տարվա ընթացքում բացակայած ուսանողի՝ հաջորդ կուրս փոխադրումը

9. Ուսանողի բացակայությունների հաշվառումն իրականացվում է ուսումնական տարվա ընթացքում:
   Բացակայող ուսանողի կուրսղեկի զեկուցագրի հիման վրա՝
- 130 -230 դասաժամ բացակայած առաջին և երկրորդ կուսերի ուսանողների հաջորդ կուրս փոխադրվելու հարցը քննարկվում է մանկավարժական խորհրդում՝ մինչև մայիսի 15-ը,
- 230-ից ավելի դասաժամ բացակայած ուսանողի Հաստատությունից դուրս մնալու հարցը քննարկվում է մանկավարժական խորհրդում 230 դասաժամը լրանալուն պես:
10. Առաջին և երկրորդ կուսերում՝ որևէ կիսամյակում 130-230 ժամ բացակայության դեպքում սովորողի կիսամյակային գնահատականները չեն նշանակվում՝ անկախ

ընթացիկ գնահատականների առկայությունից: Տվյալ կիսամյակի կիսամյակային գնահատականները որոշվում են լրացուցիչ քննությունների և ամփոփիչ ստուգողական աշխատանքների միջոցով:

11. Ուսումնական տարվա ընթացքում, առաջին և երկրորդ, կուսերում 130-230 ժամ բացակայության դեպքում բոլոր առարկաների տարեկան գնահատականները որոշվում են լրացուցիչ քննությունների և ամփոփիչ ստուգողական աշխատանքների միջոցով՝ սույն կարգի համաձայն: Տարեկան գնահատականները որոշվում են երկու կիսամյակների գնահատականների հանրագումարների միջինացման արդյունքում:
12. Առաջին և երկրորդ կուսերում 130-230 ժամ բացակայության դեպքում սովորողները, տվյալ տարվա մայիսի 20-30-ը ընկած ժամանակահատվածում լրացուցիչ քննություններ են հանձնում մանկավարժական խորհրդի որոշմամբ 5 առարկայից:
13. Առաջին և երկրորդ կուսերի ուսանողը 230 ժամից ավելի բացակայելու դեպքում չի փոխադրվում հաջորդ կուրս՝ դուրս է մնում ուսումնարանից, Ցանկության դեպքում՝ անձը կարող է իր ուսանողական իրավունքը վերականգնել ըստ կարգի:
14. Բոլոր կուրսերում քննական և ստուգողական առաջադրանքները մշակվում են Հաստատության մեթոդմիավորումների կողմից՝ առնվազն 3 տարբերակով: Դրանք հաստատվում են Հաստատության տնօրենի կողմից:
15. Հաստատության ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալը կազմում է սույն կարգի 13-րդ կետում նշված քննությունների ժամանակացույցը և ներկայացնում տնօրենի հաստատմանը:
16. Լրացուցիչ քննությունների և ամփոփիչ ստուգողական աշխատանքների հիման վրա նշանակվում են ուսանողի տարեկան գնահատականները: